

ԲԱՔԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ^{*})

Բաքիականութեան ծագումն.—Նրա վարդապետութիւնները.—Նրա սուրբ գրքերը.—Նրա կրած բարեշրջումները հիմնադիր Բարից լիտոյ.—Նրա ապագան:

Ինչպէս յայտնի է, ժամանակակից Պարսկաստանը, նախկին փառաւոր Իրան և Թուրան (Երան և Տաներան) պետութեան այս ողորմելի բեկորը, դաւանում է մահմեդական—չիա կրօնը: Շիա աղանդը, որ քարոզում է, թէ տառներէկու իմամներէց յետոյ, զիտութեան և ձգարտութեան դուռն (բաբ) փակուել է, ծնունդ է տուել բազմաթիւ աղանդների և հերձուածների, որոնցից շատերը, ինչպէս օրինակ, Սուֆիների, Դաւուզիների, Դահրիների, Ալաւիների—միտիկ փիլիսոփայական աղանդները—մինչև այսօր ևս շարունակում են իրանց գոյութիւնը: Մանաւանդ երկարատե կեանք ունեցաւ Սուֆիների աղանդը, որի փայլուն ներկայացուցիչ և արտայայտիչ հանդիսացաւ XI դարում, Սելջուկների ժամանակ ծաղկող նշանաւոր միտիկ-բանաստեղծ Օմար Խայնամը, իսկ XVII դարում՝ Սեֆեւեան հարստութեան հիմնադիր Շահ Իսմայիլը:

Սակայն այդ աղանդներից ոչ մէկը չը կարողացաւ այնքան լայն ծաւալ ստանալ, այնքան զարգանալ, այնքան շատ կուսակիցներ և հետևողներ ունենալ, ինչպէս բաբիականութիւնը կամ բեհայականութիւնը, որովհետեւ բաբիների թիւն այսօր հաշւում են մօտ 3 միլիօն Պարսկաստանում և 2 միլիօն Կովկասում, Միջին-Ասիայում, Անդրկասպեան աշխարհում, Թիւրքեստանում ու Փոքր-Ասիայում՝ այդ երկիրների մահմետականների մէջ. ընդամենը ուրեմն 5 միլիօն: Ի նկատի ունե-

^{*}) Ներկայ յօդուածն ամփոփում է այն լիակատար ղեկուցման (Le Babisme en Perse), որ հեղինակը կարդացել է անցեալ տարի Պարիզում, Սորբոնի դահլիճում, սեպտեմբերի 3—8-ին գումարուած «Կրօնների պատմութիւն միջազգային կօնգրէսում» (Congrès International d' Histoire des Religions):

նալով, որ Պարսկաստանի ամբողջ ազգաբնակութիւնը 7 միլիոնից աւելի չէ, մենք տեսնում ենք, որ այդ ազգաբնակութեան գրեթէ կէսը դաւանում է, թէև ծածուկ, բաբական կրօնը, որ այդպիսով, մենք վտանգ է սպառնում Իսլամին, և, տարակոյս չը կայ, գէթ նրանց համար, որոնք չփութել են պարսիկ ժողովրդի հետ, թէ բաբութիւնը Պարսկաստանի ապագայ կրօնն է և կոչուած է յեղաշրջելու Իրանի ամբողջ կազմը:

Բաբութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բեակցիա, բողոք, իսլամի ստրկացնող, մահացնող ըէփմի դէմ, այն բարոյական ճշման դէմ, որ իսլամը գործել է և գործում է թշուառ, խեղճ, ի բնէ հեզ ու մեղմ քաղաքակրթութեան ընդունակ պարսիկ արիական տարրի վրայ: Շիա իսլամը իր հակամարդկային, յետադէմ գաղափարներով, իր այն վարդապետութեամբ, թէ գիտութեան և ճշմարտութեան դուռը փակուել է ընդ միշտ մարդկանց առաջ 12 իմամներից յետոյ, իր ատելութեամբ և արհամարհանքով դէպի օտար ազգերը, դէպի օտար գիտութիւնները ձգել է Պարսկաստանը և պարսիկ ժողովուրդը տնտեսական, բարոյական և մտաւոր ամենաողորմելի վիճակի մէջ: Իսլամ կրօնի լուծն այնքան խորտակող, ճնշող է, որ այլևս անտանկի է դարձել, և անա բաբականութիւնը, գլուխ բարձրացնելով այդ ստրկական լծի դէմ, հակադրում է նրան երկու սկզբունք ինքիհաղ և իքքիֆազ (միութիւն և համերաշխութիւն), որովհետև այդ երկու սկզբունքի մէջ է կայանում բաբութեան էական վարդապետութիւնը. սկզբունքներ, որոնք տրամադծօրէն հակառակ են իսլամի դաւանանքին:

Բաբութիւնը ծնունդ է առել 1844-ին: Նրա հիմնադիրն է մի երիտասարդ, Միրզա Ալի-Մուհամմէդ, որ ծնուել է Շիրազում 1819-ին և գլխատուել 1850-ին, 31 տարեկան հասակում, Նաբէդդէին-Շահի հրամանով: Նա վերակոչուել է Բաբ (զուռն), որովհետև, մի օր, երբ չիա աստուածաբանները, սէյիդները և ուլէմները (գիտնականները) հաստատում էին, թէ գիտութեան և ճշմարտութեան դուռը փակուած է, երիտասարդ Միրզա-Ալին գոռաց. «Ո՛չ, գիտութեան և ճշմարտութեան դուռն (բաբ) բացուած է և ես եմ այդ դուռն»: Այդ նշանաւոր օրը, 1844 թ. մայիսի 12-ը յայտնութեան (զուհուր) և բաբութեան ծագման օրն է համարւում և ամեն տարի տօնուում է բոլոր բաբիների կողմից:

Այդ օրից սկսած երիտասարդ հիմնադիրը ճանաչուեց իբրև Բաբ, Դուռն, որով Աստուած յայտնում էր մարդկանց իսկական գիտութիւնը և ճշմարտութիւնը, որոնք մինչև այդ օր անծանօթ էին մնացած: Բաբն այդ ժամանակ 25 տարեկան էր: Բոլոր

հարստահարուածները և շիա անբարոյական կղերից ճշուռածները, գիտութեան և խօսքի բոլոր ծարաւիները վազեցին Պարսկաստանի ամեն անկիւններից դէպի նոր Մահդին, լսելու նրա բերանից ճշմարտութիւնը, որ Աստուած կամենում էր, վերջապէս, յայտնագործել մարդկանց։ Շարշտումն այնքան մեծ ծաւալ ստացաւ, որ շիա հոգևորականութիւնը զգաց, թէ դրութիւնը խախտուած է և կոչում արեց Մահմէդ Շահին՝ վերջ դնելու հերետիկոսութեան, և խստիւ պատժելու հերետիկոսապետին։ Շահը առաջ դիմեց խաղաղասիրական միջոցների. նա Շիրազ ուղարկեց Թէհրանի մեծ մուշթէյիդին, Սէյիդ Եահիա Դարաբին, որ քաջ աստուածաբանի համբաւ ունէր, յայտնի աստուածաբան հոգևորականների մի ամբողջ խմբով, որպէսզի Շիրազում կրօնական վիճաբանութիւն սարքեն և ամօթահար անեն Բաբին։

Դարաբին վստահ էր միանգամայն, որ վիճաբանութեան հէնց առաջին օրը իրան կ'աջողուի ցոյց տալ ժողովրդին, թէ Բաբը կեզծ Մահդի է, չարլատան և իսլամի սուրբ օրէնքները պղծող ու, հետևաբար, արժանի քարկոծուելու։ Բայց որքան մեծ եղաւ Մահմէդ Շահի, նրա վէզիրների ու մօլլաների ապշութիւնը, երբ մի քանի նիստից յետոյ, Դարաբին յայտարարեց, թէ Բաբը հաւատացեալների սպասած ճշմարիտ Մահդին է, ամենակարող Ալլահի դեսպանն ու առաքեալը, որ եկել է ճշմարտութիւնը քարոզելու համար։ Դարաբին ոչ միայն հրաժարուեց իր բարձր հոգևոր պաշտօնից, այլ և, իբրև Բաբի ճշմարիտ առաքեալ, սկսեց շրջել Պարսկաստանում և քարոզել նրա պատուիրանները։ Սկանդալը ահագին էր Իսլամի և շիա կղերի համար. կղերը նոյովքի շանթեր արձակեց այն ամեն մի շիա մահմետականի դէմ, որ կը համարձակէր յարել նոր հերձուածին. կառավարութիւնը յայտարարեց, որ յարքուճիս պէտք է զրաւունեն այն մահմետականների գոյքը, որոնք կը կասկածուեն իբրև կուսակից բաբիութեան։ Կղերն աւելի առաջ գնաց. նա քարոզեց մզկիթներում, հրապարակներում, մադրասաներում, թէ սպանել Բաբին, նշանակում է աստուածահանոյ դործ կատարել, Ալլահի շնորհներին արժանանալ և մարդասպանը կարող է առաջուց ապահով լինել, թէ նրա համար պատրաստուած են դրախտի մէջ ճշմարիտ մուսլիմին սահմանուած բոլոր զուարճութիւնները և բերկրութիւնները։

Սակայն հալածանքը, ինչպէս և միշտ, բոլորովին հակառակ արդիւնք արտադրեց. նոր աղանդաւորների թիւը աճում էր ամեն օր, ամեն բոպէ։ Դարաբիից յետոյ, Զանջան քաղաքի մուշթէյիդը, մօլլա Մահմադ-Ալին, Պարսկաստանի ականաւոր ու լէմներից մէկը, հրատարակեց իրան Բաբի աշակերտ. նրան հե-

տեղեցին ուրիշ շատ նշանաւոր մօլլաներ իտրասանում, Արդա-
բիլում: Շուտով վրայ հասաւ մի դէպք, որ ամենամեծ ցնցումն
գործեց ամբողջ երկրում և մի հզօր մղումն տուեց բարեութեան
տարածման պարսիկ կանանց մէջ: Ղազուինի մուշթէյիդի մա-
տաղահաս և գեղեցիկ աղջիկը յայտարարեց իրան Բաբի աշա-
կերտունի: Ղազուինը յայտնի է իբրեւ մի քաղաք, ուր կենտրո-
նացած են շիա աստուածաբանական դպրոցները, որոնք շատ
յարգի են մահմեդականների մէջ: Երևակայեցէք ապշութիւնը,
սոսկալի գայթակղութիւնը, երբ այդպիսի մի քաղաքի կրօնա-
պետի աղջիկը հաւատուրաց է լինում և ընդգրկում այն կրօնը,
օրի անխնայ հալածողն է իր հայրն: Երիտասարդ հերոսունին,
որ կոչւում էր «Ղուրրաթ-էլ-էյն» (աչքի լոյս) պարսիկ առաջին
կինն եղաւ, որ բմբոստացաւ իսլամի լծի դէմ և պաշտպանեց
կնոջ իրաւունքները. նա դէն չպրտեց քօղը կամ աւանդական
շաւաւը և դուրս գալով հասարակութեան առաջ երեսը բաց—
մի բան որ անլուր էր մինչև այդ ժամանակ—սկսեց կարգալ
ոտանաւորներ, երգել կրօնական երգեր: Այդ ոտանաւորները և
երգերը ինքն էր յօրինում և դրանք ոչ միայն զուրկ չեն բանաս-
տեղծական ճաշակից, այլ և գրական տեսակէտից շատ աջո-
ղուած են. փառաբանում են ազատութիւնը, կնոջ և տղամար-
դու հաւասարութիւնը: Մինչև այսօր էլ այդ երգերը երգւում
են Պարսկաստանում: Այն հեռուորական տաղանդը, եռանդը և
խորին ոգևորութիւնը, որ երիտասարդ առաքելունին գործ էր
դնում՝ քարոզելու համար Ղազուինի փողոցներում նոր վարդա-
պետութիւնը, մանաւանդ նրա հրաշալի գեղեցկութիւնը, գրա-
ւում էին հետևողների ահագին բազմութիւն: Հայրը, Ղազուինի
մեծ մուշթէյիդը, մեռաւ վշտից, նրան յաջորդեց եղբայրը, որ
նզովեց իր եղբօր աղջկան՝ Ղուրրաթ-էլ-էյնին և սա ստիպուեց
թողնել քաղաքը և փախչել: Բաբիններից մէկը, սիրահար մա-
տաղահաս օրիորդի գեղեցկութեան և պերճախօսութեան, վրէժ-
խնդիր եղաւ, սպանելով այդ հօրեղբօրը, որ դասուեց շիանե-
րի կողմից մարտիրոսների շարքում: Ղուրրաթ-էլ-էյնը բանտար-
կուեց Թէհրանում, իբրեւ խռովարար և երբ 1852 թուին սկսուեց
բամբինների դէմ մեծ հալածանք, նա գլխատուեց Նասրէդդին
Շահի հրամանով ու նրա մարմինը ձգուեց հորի մէջ: Երիտա-
սարդ բանաստեղծունու գրական գործերը—կրօնական երգեր,
միստիկ-փիլիսոփայական բովանդակութեամբ ոտանաւորներ—
տպուած են այժմ և սքանչացում են պատճառում բաբիններին,
նոյն իսկ շատ մուսուլմաններին:

Կառավարութիւնը, տեսնելով որ կրօնական նոր շարժումը
վտանգաւոր կերպարանք է ստանում, հրաման տուեց կալանա-

ւորել Բաբին. նա ուղարկուեց Թաւրիզ և բանտարկուեց Չեհ-
բի բերդում. շուտով բերդի կառավարիչն ու պահապանները,
բաբիական յայտարարեցին իրանց, այն ժամանակ հրամայուեց
ուղարկել Բաբին Մաքու: Սյդտեղ, բանտում, Բաբը չէր դադա-
րում գրել և ուղարկել իր աշակերտներին ու նորահաւատնե-
րին իր պատուիրանները, իր յայտնութիւնները (բէյան), իր
մեկնաբանութիւնները աստուածաշնչի, աւետարանի և զուրանի
մասին: Սյդ բանտում նա գրեց բաբիութեան սուրբ գրքերը —
«Բէյանը», «Անսան-ուլ-Կասար», «Բիթաբը-Հայափիլը» և ուրիշ-
ները, որոնք գրուած են արաբ և պարսիկ լեզուներով:

Բաբի բանտարկութիւնը գրգռեց և զայրացրեց նրա կողմ-
նակիցներին ու հետևողներին, որոնք սկսեցին խուժը-խուժը գալ
Պարսկաստանի զանազան կողմերից, նրան այցելելու համար:
Յուզմունքը, խռովութիւնը գնալով սաստկացաւ. Սորապանու-
Մազանդարանում, Շիրազում, Ջանջանում արիւնահեղ ընդհա-
րումներ տեղի ունեցան: Բաբիները ստիպուեցան ղէնքը ձեռ-
քին պաշտպանուել: Ջանջանում զօրքը պաշարեց բաբիներին մի
թաղի մէջ, որտեղ բաբիները մարտկոցներ էին կառուցել և
այդտեղ ամբողջ ինն ամիս պաշարուած կուռւմ էին զօրքի դէմ.
մեծ մասն կոտորուեց, մանաւանդ որ զօրքը թնդանօթ գործ
գրեց: Ի վերջոյ, կառավարութիւնը, կարծելով, որ խռովութիւն-
ները և ապստամբութիւնը կը հանդարտեն, եթէ բաբիների
պետը մէջտեղից վերցուի, հրաման տուեց գլխատել նրան: Բա-
բը գլխատուեց իր աշակերտների մէկի հետ Թաւրիզում, 1850
թ. յունուարի 27-ին, Նասրէդդին Շահի թագաւորութեան ըս-
կզբում:

Սակայն նոր կրօնի հիմնադրի մահը առաջ չը բերեց ցան-
կացած խաղաղութիւնը: Գաղափարը հսկայական առաջադիմու-
թիւն էր գործում և երեք հոգի բաբիներից իրանց մուկոսնդու-
թիւնը մղեցին մինչև այնտեղ, որ սպանութեան փորձ կատա-
րեցին Նասրէդդին Շահի դէմ, կամենալով զրանով հանել իրանց
ուսուցչի մահուան վրէժը և դադարեցնել տալ հալածանքները:

Փորձը չաջողուեց. մի ընդհանուր հալածանք սկսուեց
բամբիների դէմ, որոնցից շատերը մարտիրոսացան ահռելի
տանջանքի մէջ: Պէտք է ասենք, որ Նասրէդդին Շահը բաբինե-
րի ամենաանգութ հալածողներից մէկը եղաւ և միայն նրա թա-
գաւորութեան վերջին տարիներում, այն ևս ուռւաց և անգլիամ
կան դեսպանատան միջամտութեան չնորհիւ, արիւնոտ շտ
վրէժինդրութիւնը դադարեց: Ներկայ, Մուզաֆֆէր-էդդին
Շահը չէ հետևում իր հօր աններողամիտ քաղաքականութեան
և բաբիութիւնը, թէև պաշտօնապէս արգելուած է համարում,

բայց լռելեայն թոյլատրուած է և հալածանքները բոլորովին դադարել են:

Բարբի մահից յետոյ, նրա վարդապետութիւնը շարունակեց տարածուել, բայց բարեխաւս համայնքի մէջ երկպառակութիւն առաջ եկաւ այն հարցի վերաբերմամբ, թէ ով պէտք է լինի նրա յաջորդը: Բարբիները բաժանուեցին երկու կուսակցութեան: Բարբի յաջորդ ընտրեցին նրա առաջին աշակերտ, երկտասարդ աղա Սէյիդ Եահիան, որ շատ սիրելի էր Բարբին և որին նա տուել էր «Սուբհը-էզէլ» (յաւիտեանականութեան այգ) մականունը: Սակայն այս էզէլի անդրանիկ եղբայրը, Միրզա-Հուսէյն Ալին, որ ապագայում կոչուեց Բէհա, սկսեց պնդել, թէ Բարբին յաջորդելու իրաւունքն իրան է պատկանում, յայտնելով որ ինքը Բարբը նշանակել է նրան յատկապէս իր յաջորդ, որովհետեւ այն նախադասութիւնը, որ Բարբն արտասանել է իր ճառերից մէկում, այն է «Մէճ Իուզհի-րուհ-ուլլահ» (մարդ, որին Աստուած պէտք է յայտագործէ) ուղղակի իրան է վերաբերում: Այդ հիման վրայ Բարբիները բաժանուեցին երկու մասի—Բեհայականների և Էզալիականների. եռանդուն բանակով սկսուեց Բէհայի և էզէլի մէջ, վերջինս մեղադրում էր Բէհային թէ նա յեղաշրջել, կերպարանափոխել է Բարբի պատուիրանները և վարդապետութիւնը, մինչդեռ ինքը հետամուտ է խստիւ պահպանելու և անթերի գործադրելու Բարբի քարոզած սկզբունքները: Սակայն Բէհային աջողուեց հետզհետէ դերակշռութիւն ստանալ, բարեփոխելով, վերանորոգելով, ընդարձակելով Բարբի վարդապետութիւնը և այսօր Բէհայականութիւնն է տիրապետող հանդիսանում, իբրեւ ճշմարիտ բարեխաւսութիւն և դաւանում գրեթէ բոլոր բարբիների կողմից, որովհետեւ էզալիականների թիւը այնքան նուազել է այսօր, որ մինչև անգամ 10,000-ի չէ հասնում:

Պէտք է ասել, որ Բէհան, ապաստանելով առաջ Բաղդադում մեծ հալածանքների ժամանակ, արսորուեց օսմանեան կառավարութեան ձեռքով, պարսից կառավարութեան պահանջմամբ, Աքիա բերդաքաղաքը, որտեղից նա կառավարեց իր հօտը ամբողջ 42 տարի, իբրեւ ճշմարիտ հիմնադիր և պետ նոր կրօնի, որովհետեւ նա ապացուցանում էր նոյն իսկ, թէ Բարբը միայն իր կարգապահ էր. նա նոյն իսկ այն յաւակնութիւնն ունէր հաւատացեալներին ուղղած իր թղթերի մէջ, թէ ինքն է այն Հայրը, որի մասին խօսուում է աւետարանում, երբ Յիսուս ասում է. «Հայրը, որ երկնքումն է, կրգալ»: «Ես եմ այն ճշմարտութիւնը—ասում է Բէհան—որին սպասում է մարդկային ցեղը»:

Բէհան մեռաւ 1892-ին, նշանակելով իրան յաջորդ իր անդրանիկ որդուն, Աբբաս Էֆէնդիին, որի մականունն է «Ղիւանը Անգամ» (մեծ ճիւղ) և որ կառավարում է այսօր բարեական հօտը առանց հակառակորդի, որովհետեւ Էֆէնը, որ նոյնպէս արքորունց օսմանեան կառավարութեան կողմից կիպրոս կղզին, ուր ապրում է դեռ մինչև այսօր, թողել է բոլորովին իր յաւակնութիւնները։ Այն թղթերը, որ Աբբաս Էֆէնդին ուղարկում է պարբերաբար բաբիններին և որոնք կոչւում են «Խաւիի սիսի» (թուղթ քաղաքականութեան մասին), ցոյց են տալիս, որ նա հետեւում է խաւի իր հօր սկզբունքներին։

Եւ պատմեցի բարիութեան ծագումը և զարգացումը։

Այժմ մնում է խօսել բարիութեան վարդապետութիւնների մասին։ Սակայն որպէս զի ցոյց տամ, թէ ինչ էր բարիութիւնը սկզբում, ինչ բարեփոխութիւններ և յեղաշրջումներ նա կրեց և ինչ է այժմեան բարիութիւնը կամ բէհայականութիւնը, պէտք է ասեմ, որ հիմնադիր Բաբը չը կարողացաւ թօթափել իրանից իսլամի աւանդութիւններից շատերը և մուսուլման կրօնի մէջ նրա կատարած յեղափոխութիւնը արմատական չէ, որովհետեւ նա խնայել է Մահմէդի կրօնի մի քանի հիմնական սկզբունքները։ Այսպէս օրինակ՝ 1) Բաբը նախամեծարութիւն էր տալիս արաբական լեզուին, որով գրուած է զուրանը և որ սուրբ է համարւում մուսուլմանների կողմից. 2) Բաբը քարոզում էր, որ պէտք է նուաճել նաև այս աշխարհի թագաւորութիւնը, որ պէտք է տարածել նոր կրօնը ոյժով, և այսպիսով նա հետեւում էր միայն Մահմէդի օրինակին. 3) նա պատուիրում էր հաջիլութիւնը, ուխտագնացութիւնը. 4) նա պաշտօնաւորում էր խաւի օտար և մանաւանդ մեռեալ լեզուների ուսումնասիրութիւնը. Բէյանի մէջ, նա պատուիրում է այրել աշխարհիկ գրքերը և չը սովորել աշխարհիկ գիտութիւնները։ Նա ձգտում էր ոչ թէ իսլամի տեղ մի այլ կրօն պատրաստել, այլ միայն բարեփոխել Մուհամմէդի քարոզած կրօնը։

Սակայն նրա յաջորդ Բէհայի գործը մի ամբողջ յեղափոխութիւն էր, որ խախտեց և կործանեց իսլամի հիմունքը։ Նա տուեց բարիութեանը կօսմօւլօլիա բնաւորութիւն, ազատամիտ, մարդասէր զաղափարներով։ Նա ձգտեց բարեշրջել բարիութիւնը այն ձևով, որ դա լինի բոլոր կրօնների եվօլյուցիան և եթէ նրան չաջողուեց իրագործել ամբողջովին այդ միտքը, գոնէ նրա քարոզած վարդապետութիւնը—բէհայականութիւնը ամենամարդասէր և արտուրիստ վարդապետութիւններից մինն է հանդի-

սանում, ինչպէս կարելի է համոզուել նրա էական դաւանութիւններից:

Բարիութեան էական դաւանանքները, ինչպէս նրանք լուսաբանուած են սուրբ գրքերի կամ «Քրիթարը Էզդէ»-ի, նոյնպէս և Բէհայի այլ պատուիրանների, այն է՝ «Իգան», «Քրիթալ Մուրին» (Թուղթ, ուղղած թագաւորներին) շարադրութիւններ և Բաբի գրած «Բէյան», «Էհան-ու-Կասսաս» և «Քրիթարը Հայքիլ» գրքերի մէջ, — հետեւալներն են.

Ինչպէս յօդուածիս սկզբում ասացի, երկու սկզբունք կամ մօտ կ'են բարիութեան հիմքը — ինքիհաղ և իրքիճազ (միութիւն և համերաշխութիւն մարդկային ցեղի): Բարիութեան նպատակը՝ սրտերի թագաւորութիւնն է, հետեւաբար, աշխարհակալութիւն, տիրապետութիւն, նուաճումն, քաղաքական զաղափալներ — գոյութիւն չունեն նրա համար: Բոլոր մարդիկ հաւասար են և եղբայրներ. չը կայ ո՛չ մեծ, ո՛չ փոքր, ո՛չ աղնուական, ո՛չ գոհնիկ: Բոլոր մարդիկ մի և նոյն հայրենիքի զաւակներն են. չը կայ յատուկ հայրենիք (հետեւաբար հայրենասիրութեան զաղափարը գոյութիւն չունի բաբիների մէջ): Այդ առիթով Բէհասանում է, թէ «Լաւագոյն էր, եթէ բոլոր ազգերը, ամբողջ մարդկային ցեղն ունենար մի լեզու և մի ընդհանուր գիր»:

Բոլոր ազգերը լաւ են Աստուծու առաջ, չը կայ ընտրեալ ազգ, չը կան ընտրեալներ, ինչպէս ենթադրում են հրէաներ և մուսուլմանները. ոչ մի խտրութիւն չը կայ մարդկային ցեղերի մէջ. սպիտակ, սև, դեղին, ամենքը հաւասար են: Կի՞նք յարգուած է և վայելում է իրաւունքներ. ամուսնութիւնը կարող կայանալ առանց երիտասարդի և աղջկայ յօժարութեան Միակնութիւնը գերադասելի է. միայն կնոջ ամուսնեան դէպքում, տղամարդը կարող է երկրորդ կին առնել, առանց արձակելու առաջինին. սիլա կամ հարձ պահելը արգելուած է. եթէ ամուսինը կամենայ ճանապարհորդել, կամ բացակայ տանից, նա պէտք է ստանայ կնոջ հաւանութիւնը, այլապէս ա կարող է, 9 ամիս սպասելուց յետոյ, ազատ ճանաչել իրաւունքը և ուրիշ մարդու հետ ամուսնանալ: Ապահարդան կարելի է տանել կնոջ անհաւատարմութեան պատճառով: Կինը կարող է ունենալ անհատական սեփականութիւն: Ժառանգութիւնը բաժանուած է 2520 մասի և տրւում 7 տեղ. առաջին բաժինը, բարկացած 540 մասից, տրւում է հանգուցեալի զաւակներին, առանց սեռի խտրութեան. երկրորդ բաժինը, բաղկացած 480 մասից, տրւում է այրիին. երրորդը, բաղկացած 420 մասից, հօրը. չորրորդը, բաղկացած 360 մասից՝ մօրը, հինգերորդը, բաղկացած 300 մասից՝ եղբայրներին. վեցերորդը, 240 մասից,

քոյրերին, և եօթներորդը, 180 մասից՝ երեխաների ուսուցիչներին: Եթէ այդ ժառանգներից որ և է մէկը չը լինի, նրա բաժնի մի երրորդը տրոււմ է զաւակներին, իսկ մնացած $\frac{2}{3}$ -ականը Արդարութեան Տանը—(«Բէյթ Ալլիէ»): Արդարութեան տունը մի հաստատութիւն է, կամ մի յանձնաժողով, բաղկացած 10—20 անդամներից, որոնք ընտրուում են համայնքի ամենապատկառելի անձանց միջից և որոնց յանձնուում է համայնքի գործերի ղեկավարութիւնն ու վարչութիւնը. այդ յանձնաժողովն է քրննում վէճերը, նա է հոգս տանում որբերի և աղքատ երեխաների դաստիարակութեան ու կրթութեան վրայ, որովհետեւ ծնողները պարտաւոր են խնամուած կրթութիւն տալ իրանց զաւակներին, իսկ եթէ չքաւոր են, այդ հոգսը ծանրանում է քէյթի վրայ:

Բէհայի պատուիրանի համաձայն, որ ասում է բաբիններին, թէ «չը կայ հայրենիք ձեզ համար, ամբողջ տիեզերքը ձեր հայրենիքն է, որովհետեւ դուք միեւնոյն ծառի ճիւղերն ու պտուղներն էք», թոյլատրւում է ամուսնութիւն բաբինների և ուրիշ ազգութեան պատկանող մարդկանց: Ստրկութիւնը և գերեզմանութիւնը խիստ արգելուած են: Աշխարհիկ գիտութիւնների և օտար լեզուների ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է ճանաչուած: Հաւատը դէպի ճակատագիրը գոյութիւն չունի քայն մտքով, որով բմբռնում են մուսուլմանները. ամեն ինչ, որ բնական է և չէ կարող փոփոխուել, ենթարկուած լինելով բնութեան օրէնքներին—ահա ճակատագիրը, բայց իր գործողութիւնների, իր գոյութեան մէջ մարդը պէտք է առաջագիմէ, միշտ առաջ խաղայ դէպի լոյսը և ճշմարտութիւնը:

Բաբին պարտաւոր է հնազանդել ամեն այն երկրի օրէնքներին, որտեղ նա ապրում է և յարգել այդ օրէնքները. կառավարչական ձևերի մէջ, հանրապետականը, կամ այն ձևը, որի ներքոյ ամենքը կարող են քաղաքացիներ լինել, ունենալով միեւնոյն իրաւունքները և պարտաւորութիւնները, աւելի գովելի է: Ամեն մարդ պէտք է աշխատէ, բայց անձարները, աղքատները պէտք է խնամուեն Բէյթի ձեռքով և ամեն մի բարի պէտք է վճարէ դրա համար Բէյթին մի որոշ գումար:

Պատերազմը, նոյն իսկ հաւատի համար, ջնջուած է և Բէհան յանձնարարում է կարգադրել վէճերն ու կոխները ազգերի մէջ հրապարակական դատարանով:

Ահա սրանք են համառօտապէս բաբութեան պատուիրանները ընկերական կեանքի համար: Գալով բարոյական կեանքին, Բէհան ոչ միայն արգելում է ստախօսութիւնը որ և իցէ ձե-

ւով, ինչ և լինի նրա նպատակը, բայց նա ընդդէմ է նաև շողոքորթութեան, հոգևորականների ու ծերունիների աջը համբուրելու սովորութեան. նա արգելում է նաև ասկետականութիւնը, ամուրիութիւնը, իբրև ոչ աստուածահաճոյ գործեր: Սակայն մուսուլմանների քաղիէն, այսինքն այն թոյլութիւնը, որ տրուած է ամեն մի մուսուլմանի՝ կեղծել, ուրանալ իր հաւատը վտանգի դէպքում, տրուած է և բարիններին:

Մի քանի խօսք ևս այս նոր կրօնի ծիսական պատուիրանների մասին:

Բարիութիւնը չէ ընդունում ոչ խոստովանութիւն, ոչ մղըրտութիւն, ոչ սուրբերի բարեխօսութիւն այն նկատմամբ, թէ մարդը պէտք է դիմի իր Աստուծուն անմիջապէս, զղջայ իր մեղքերը նրա առջև, հայցէ նրա թողութիւնը: Բայց թլպատութիւնը գործադրում է, նախ՝ առողջապահական և ապա մուսուլմանների հալածանքից ազատ մնալու նպատակով: Աղօթքն անհրաժեշտ է, բայց ոչ պարտադիր ամեն օր: Բարինները գումարում են մի տան մէջ կամ «մաւրիզ-ուլ-ա'գֆէր»-ի մէջ (եկեղեցի), եթէ կայ, նստում են ծախպատիկ և մի կարճ աղօթք են արտասանում բարձրաձայն, ապա երգում են կրօնական երգեր և կարդում են Բաբի կամ Բէհայի պատուիրանները: Ահա գլխաւոր կամ տէրունական աղօթքը. «Խոստովանում և դաւանում եմ, ո՛վ Աստուած, որ դու յայտնեցիր ինձ ճշմարտութեան արեգակը, վկայում եմ, որ չը կայ ուրիշ ճշմարտութիւն (հազգ) բացի նրանից, դաւանում եմ, որ ոչ ոք չէ կարող ոչ քեզ գովել, ոչ քեզ երևակայել: Ո՛վ իմ Աստուած, մի մերժիր մարդու, որ իր յոյսի մատերով կախ է ընկնում քո ծոցից»:

Բարինները ընդունում և հաւատում են երեք մարգարէներին, յաջորդական կարգով—Մոփսէսին, Յիսուսին և Մահմէդին: Ով հաւատում է Բաբին կամ Բէհային, պէտք է առաջ հաւատայ այդ երեք մարգարէներին: Յիսուս կոչւում է Իրն-Ուլլահ (Որդի Աստուծոյ): Ուխտագնացութիւնը կամ «հաջը», աղօթքը միւսլիմների համար, կամ հոգեհանգիստը նկատուում են իբրև անօգուտ, և Բէհան պատուիրում է տալ Արդարութեան Տանը (Բէյթին) ուխտագնացութեան և հոգեհանգստի համար նշանակուած գումարները: Պատ չը կայ, բայց տարուայ մէջ 19 օր պարտադիր ծոմ կայ: Բարինները հաւատում են հանդերձեալ կեանքին և յաւիտենականութեան, բայց չեն ընդունում ոչ դժոխքը, ոչ արքայութիւնը, ոչ քաւարանը: Ամեն մարդ իր հատուցումը կը ստանայ կամ իր պատիժը, իր գործողութիւնների համաձայն, բայց մարդուն տրուած չէ իմանալու, թէ ինչ ձևով: Երբ մէկը մեռնում

է, լուանում են մարմինը, պատանում են եօթը կտոր կտաւի կամ մետաքսի մէջ և դնում են նրան դագաղում:

Անշուշտ, շատ լեգենդաներ կան հնարուած չարամտութեամբ, որոնց աղբիւրը պէտք է որոնել մուսուլմանների ֆանատիկոսութեան և դէպի բաբիններն ու Բէհան ունեցած ատելութեան մէջ, բայց երբ խոր կերպով ուսումնասիրում ենք սուրբ գրքերը, բոլոր այդ լեգենդաները չքանում են: Բաբիութիւնը, հիմնուելով ալտրուիստ, մարդասէր և խաղաղասիրական գաղափարների վրալ, ոչ մի ընդհանուր բան չունի իսլամի հետ. թըւում է թէ նա աւելի լաւ է համապատասխանում արիական պարսիկների խաղաղասէր, մեղմ բնաւորութեան և ձգտումների: Նա կոչուած է լինելու իրանի ապագայ կրօնը, և դա կը լինի մի մեծ բարեբախտութիւն այդ թշուառ երկրի համար:

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ